


ՄԵԾ ՀԱՅԱԳԵՏԻ ՈՒ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԴԱՍԵՐԸ

Posted on November 10, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ

Այս տարի կը լրանայ ԵՊՀ-ի Բանասիրական բաժնի երախտաշատ դասախօս Պրոֆ. Ռաֆայել Իշխանյանի ծննդյան 100-ամեակը: Ան մեծ ազդեցություն է ձգած է իր ուսանողներու ՀԱՅԵՑԻ կրթության եւ դաստիարակության վրայ: Պրոֆ. Ռ. Իշխանյան նաեւ մաքրախօսության մեծ ջատագով մըն էր:

Վահան Վերմիշյան, Սինֆերոպոլ (Ղրիմ), 28 Հոկտեմբեր 2022

Դաս առաջին

1974 թվականն էր: Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետի երրորդ կուրսի լսարան մտավ բարձրահասակ, դասախոսի մեր պատկերացումներին մի տեսակ չհամապատասխանող, բավականին անփույթ հազնված դոցենտ Ռաֆայել Իշխանյանը: Գիտեինք, որ գիտությունների դոկտոր է, սկզբունքային մարդ և գիտնական:

Բարևելուց հետո կուրսի ավագից պահանջեց, որ մինչև առաջին դասաժամի ավարտը բոլորս ստորագրենք ընդհանուր ցուցակում ամեն մեկս մեր անվան դիմաց: Մտածեցինք, որ սա ներկա-բացակա անելու մի ձև է թանկագին դասաժամը շուրջ հարյուր հոգու անուններ կարդալուն չհատկացնելու համար, կամ էլ անվստահություն կուրսի ավագի նկատմամբ: Սխալվում էինք...

Դասամիջոցից հետո ներս մտավ մտահոգ ու բարկացած տեսքով: Մի փոքր դադարից հետո ասաց. «Եվ դուք ապագա հայ բանասերներ՞ը եք, հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ՞ը: Այսքանիցդ միայն մի քանի հոգի են ստորագրել հայերեն, մնացածը՝ այլ լեզուներով» (բացի ռուսերեն ստորագրողներից, սփյուռքահայ ուսանողներ կային, որոնք լատինատառ էին ստորագրել): Բոլորս, ինչպես ասում են, «ամոթից գետինը մտանք»: Նոր հասկացանք, թե ինչի համար էր հավաքում բոլորիս ստորագրությունները:

Սա Ռաֆայել Իշխանյանից ստացած առաջին «դասն» էր, որը սերտել եմ ամբողջ կյանքիս համար. մինչև օրս էլ, ապրելով արտերկրում, ռուսալեզու միջավայրում պաշտոնավարելով, պետական հիմնարկության տնօրեն լինելով անգամ բոլոր փաստաթղթերն ստորագրում եմ միայն իմ մայրենի հայերենով...

Դաս երկրորդ

Անչափ բարի ու հոգատար մարդ էր Ռաֆայել Իշխանյանը. ամեն առիթով հարցուփորձ կաներ ուսանողի ընտանիքի ու կեցության մասին, ով որտեղից է եկել, ովքեր են ծնողները, ինչու է ընտրել բանասերի մասնագիտությունը, ինչ է անելու ավարտելուց

հետո: Խոսակցություն կարող էր բացել դասամիջոցին, քանի որ երկրորդ ժամից առաջ հիմնականում լսարանից դուրս չէր գալիս:

Լսում էր կլանված և ուշադիր՝ ձեռքն ականջին դրած: Բոլորս էլ գիտեինք, որ Հայրենական Մեծ Պատերազմի մասնակից է, վիրավորվել է, հրետանավոր է եղել և պայթյունների ազդեցության հետևանքով՝ վատ է լսում: Միշտ թեքվում էր ձախ կողմով դեպի զրուցակիցը ու ձեռքը հովանի անում ականջին: Հասկանում էինք, որ եթե մեր մեծ լսարանի տարբեր անկյուններում նույն նստարանին նստած ընկերոջդ կամ ընկերուհուդ հետ խոսեիր, չէր լսելու, բայց այնքան պատկառանքով էինք լցված մեր դասախոսի հանդեպ, որ մտքներովս էլ չէր անցնում չլսել նրան:

Իշխանյանը թեև մեզ դասավանդում էր ժամանակակից հայոց լեզու, բայց նաև հայ գրականության մասնագետ էր. Ակսել Բակունցի ստեղծագործության մասին էր պաշտպանել թեկնածուականը: Դոկտորական ատենախոսությունն արդեն անցում էր գրականագիտությունից դեպի լեզվաբանություն՝ «Հայ նոր գրականության լեզվի պատմություն» թեմայով: Լեզվական այս կամ այն երևույթը բացատրելիս շատ օրինակներ էր բերում անգիր թե՛ արձակից և թե՛ բանաստեղծությունից, մեզնից էլ նույնն էր պահանջում: Բոլորիս հանձնարարել էր քննությունը հանձնելու համար անգիրներ անել՝ ամբողջ հատվածներ Բակունցի արձակից և քսանհինգ բանաստեղծություն Տերյանից:

Ահա և եկավ քննության օրը: Գիտեինք, որ ինչքան բարի է, այնքան էլ՝ պահանջկոտ: Եվ ես էլ, ինչպես համարյա բոլոր մեր համակուրսեցիները, լրջորեն պարապում էի, մանավանդ որ հայրիկիս խոստացել էի, ինչպես ինքը տարիներ առաջ, ես էլ ավարտեմ բանասիրականը գերազանցության վկայականով:

Քննության նախօրեին, երեկոյան համալսարանի գրադարանից վերադառնալիս շատ երկար սպասեցի տրամվայի (Իշխանյանը կասեր՝ հանրակառքի) կանգառում, մրսեցի ու հիվանդացա: Մի կերպ դեղերով ինձ կարգի բերեցի ու գնացի համալսարան: Միշտ առաջիններից մեկն էի մտնում քննության, բայց այս անգամ մի քիչ ուշացրի. տիկին Ֆրիդայի ուսանողական բուժֆետում տաք թեյ խմելուց հետո մտա լսարան, հարցատոմս վերցրեցի ու համարյա առանց պատրաստվելու մոտեցա դասախոսի սեղանին: Պատասխանեցի տոմսի բոլոր հարցերին: Լրացուցիչ հարցեր էլ տվեց Իշխանյանը. դրանց էլ պատասխանեցի:

- Իսկ հիմա անցնենք անգիրներին,- ասաց դասախոս:
- Ո՞րն արտասանեմ,- հարցրեցի ինքնավստահ, մտածելով, որ «գերազանցն արդեն գրպանումս է»:
- Տերյանից՝ «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին»:

Առանց այն էլ հիվանդ էի ու սփրթնած, զգացի որ լրիվ գուլնս զցեցի: Վահան Տերյանի

քանակինգ բանաստեղծությունից միակն էր, որ շատ էի սիրում, բայց թողել էի վերջում ու այդպես էլ կարգին անգիր չէի արել՝ հիվանդանալուս պատճառով:

- Բոլորը սովորել են, բացի այդ մեկից:

Թերահավատորեն նայեց սփրթնած երեսիս:

- Հենց միայն այդ մե՞կը:

- Այո՛, այո՛, ընկե՛ր իշխանյան:

Բացեց ստուգարքային գրքուկս, ինչ-որ բան գրեց, փակեց ու ժպտալով մեկնեց ինձ: Ներքուստ ուրախացա, մտածելով, որ ներեց բացթողումս: Միջանցքում միայն տեսա, որ «լավ» է նշանակել:

«Ինչպե՞ս թե, հայոց լեզվից չո՞րս, այն էլ պիտի գնա վկայականի մե՞ջ: Դա ուղղակի անհնարին է... Ի՛նչ խայտառակություն» մտածեցի, ու երևի առաջին անգամ ուսանողական տարիների ամբողջ ընթացքում հրաժարվեցի կուրսեցիների հետ «մի տեղ նստել»: Գնացի տուն:

Հայրս երեկոյան տուն եկավ աշխատանքից, սկզբում հարցրեց առողջությանս մասին, հետո, քանի որ վատահ էր գիտելիքներիս վրա, համենայն դեպս հարցրեց.

- Ի՞նչ ստացար հայոց լեզվից:

- Չորս,- կարճ պատասխանեցի ես ու ամոթից կարմրած մտա սենյակս՝ ետևիցս դուռը փակելով:

Հայրս բան չասաց:

Համարյա ամբողջ գիշեր չքնեցի: Վաղ առավոտյան, երբ հայրիկս պատրաստվում էր գնալ աշխատանքի, ուժ գտա խնդրելու.

- Հայրի՛կ, գուցե դիմե՞նք որևէ մեկին, որ օգնի, թե չէ կարող է կարմիր վկայական չստանամ:

- Իսկ ինչո՞ւ լավ չէիր պարապել: Հիմա ո՞վ է մեղավոր;

Պատմեցի եղելությունը չսովորած միակ բանաստեղծության մասին:

- Լավ, կփորձեմ, բայց սա առաջին ու վերջին անգամն է լինելու,- մի քիչ մեղմացած ասաց հայրիկս ու դուրս եկավ տնից:

Շատ էի կասկածում, որ հայրս կխոսի որևէ մեկի հետ, քանի որ ինքն էլ դասավանդում էր մանկավարժական ուսումնարանում և տանել չէր կարողանում, երբ իրեն էին դիմում նման խնդրանքով:

Երեկոյան ջերմությունս ավելի բարձրացավ, բայց աշխատում էի թաքցնել մերոնցից:

Հայրս մտավ սենյակս և ողորմություն տալու պես խիստ ու կիսաձայն ասաց.

- Քեզ համար բարեխոսել է Իշխանյանին շատ մոտ մի ընկեր: Վաղը չէ մյուս օրը, ժամը իննին լինես իր մոտ:

Հաջորդ օրը վիճակս ավելի բարդացավ. չկարողացա նույնիսկ անկողնուց վեր կենալ: Մայրիկս ամեն ինչ անում էր ինձ ապաքինելու համար: Ես ենթարկվում էի. անընդհատ հոնի մուրաբայով թեյ էի խմում, ինչ-որ դեղահատեր էի կուլ տալիս, նույնիսկ իմ այնքան չսիրած թթի օշարակը՝ դոշաբն էի խմում, որ չհազամ: Բանաստեղծությունը կարողացա անգիր անել. «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին...»: Եվ իսկապես, հաջորդ առավոտյան բավականին լավ էի:

Գնացի համալսարան, հայոց լեզվի ամբիոնում գտա Իշխանյանին: Միասին մտանք ազատ փոքրիկ լսարաններից մեկը:

- Դե ի՞նչ, սովորեցի՞ր:

- Սովորեցի, ընկե՛ր Իշխանյան,- պատասխանեցի՝ առանց աչքերին նայելու: Կարծում էի արտասանել կտա ու գերազանցս կնշանակի: Դարձյալ սխալվում էի...

Սկսեց բավականին բարդ հարցեր տալ առարկայից: Անակնկալի եկա. կցկտուր պատասխաններ էի տալիս, շփոթում էի ինչ-որ բաներ: «Դատավճիռը» խիստ էր՝ երեք եմ նշանակում:

Ընկճված, բայց մի տեսակ թեթևություն զգալով դուրս եկա լսարանից: Հասկացա, որ Իշխանյանը «ծանոթի միջոցով» գնահատական չի նշանակում: Հասկացա, որ այդ օրվա կատարվածը նրա հերթական դասն էր ինձ համար, կյանքի դաս...

Թեև այդ կիսամյակի բոլոր քննություններից հետո նորից դեկանատից ուղեգիր վերցրեցի, վերահանձնեցի հայոց լեզուն ու վերջապես ստացա ինձ արժանի «գերազանցը», բայց Իշխանյանի դասը հիշում եմ ամբողջ կյանքում:

Հետագայում, երբ ինքս էի դասավանդում բուհերում, բոլոր ուսանողներս, ընկերներս ու ազգականներս գիտեին, որ ես էլ, իմ դասախոսի ու հայրիկիս նման, «ծանոթի միջոցով» կամ, առավել ևս՝ կաշառքով գնահատական չեմ նշանակում...

There are no comments yet.